«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2024 թվական N __ -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 927-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33–րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3–ի «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ, 2019 թվականի ապրիլի 4-ի N 362-Լ և 2019 թվականի մարտի 7-ի N 212-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 927–Լ որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման հավելվածի 8-րդ կետը «առանց այգեհիմնման» բառերից հետո լրացնել «կարկտապաշտպան ցանցի կամ» բառերով,

2) Որոշման հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետը «100 հա-ը» բառերից հետո լրացնել «, իսկ ծախսերի մասնակի փոխհատուցման դեպքում՝ 10 հա-ը» բառերով,

3) Որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետը «տնկիներով» բառից հետո լրացնել «, ընդ որում, հիմնվող այգու ամբողջ մակերեսում ոչ

արտադրական տարածքի(այգու եզրեր, այգեմիջյան ճանապարհներ, այգեպաշտպան շերտ, սպասարկող այլ տարածքներ) մակերեսը չպետք է գերազանցի 15-18%-ը» բառերով,

4) Որոշման հավելվածի 12-րդ կետի 12-րդ ենթակետը « ընթացքում» բառից հետո լրացնել «, իսկ կարկտապաշտպան ցանցերի շահագործումը՝ հետներդրումային 6 տարիների ընթացքում» բառերով,

5) Որոշման հավելվածի 13-րդ կետը լրացնել նոր 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) 0.5-10 հա կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում, ընդ որում ծրագրի շրջանակում կարկտապաշտպան ցանցերի ներդրման նպատակով կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման բաղադրիչով ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ միայն N 18 աղյուսակում ընդգրկված, կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող բնակավայրերում գործունեություն իրականացնող և կարկտապաշտպան ցանց ներդրող տնտեսավարողները։»,

5) Որոշման հավելվածի 15-րդ կետը «միջոցով» բառից հետո լրացնել «(ներառյալ անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը)» բառերը, իսկ «ենթակա չէ։» բառերից հետո լրացնել «Շահառուն կապալառու կազմակերպության հետ պայմանագիրը պետք է կնքի վարկային կամ փոխհատուցման պայմանագիրը կնքելուց հետո։» նախադասությամբ,

7) Որոշման հավելվածի 21.1-ին կետում «N 6 N8» բառերը փոխարինել «N N 6-8» բառերով,

8) Որոշման հավելվածի 23-րդ կետի 2-րդ ենթակետի բ. պարբերությունից հանել «(ծրագրի շրջանակում նոր ձեռքբերվող անշարժ գույքի դեպքում պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում)» բառերը, ինչպես նաև «4» թիվը փոխարինել «5» թվով,

9) Որոշման հավելվածի 23-րդ կետի 4-րդ ենթակետը «իսկ» բառից հետո լրացնել «կարկտապաշտպան ցանցի կամ» բառերով,

10) Որոշման հավելվածի 24-րդ կետի 1-ին ենթակետը «կնքումը և» բառերից հետո լրացնել «կարկտապաշտպան ցանցի ներդրման կամ» բառերով,

11) Որոշման հավելվածի 24-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերությունը «ժամկետը» բառից հետո լրացնել «ոռոգման արդիական համակարգի ներդրման դեպքում» բառերով, «4» թիվը փոխարինել «5» թվով, իսկ «տարվանից,» բառից հետո լրացնել «իսկ կարկտապաշտպան ցանցի ներդրման դեպքում՝ 7 տարվանից,» բառերը,

12) Որոշման հավելվածի 24-րդ կետի 5-րդ ենթակետը «ոռոգման» բառից առաջ լրացնել «կարկտապաշտպան ցանցի կամ» բառերով,

13) Որոշման հավելվածի 24-րդ կետի 7-րդ ենթակետի ամբողջ տեքստում «ոռոգման արդիական» բառերից առաջ լրացնել «կարկտապաշտպան ցանցի կամ» բառերով, իսկ «, ջրավազանի դեպքում» բառերից առաջ լրացնել «(բացառությամբ կարկտապաշտպան ցանցի ներդրման դեպքի)» բառերով,

14) Որոշման հավելվածի 24-րդ կետի 11-րդ ենթակետի ա. պարբերությունը «շահառուի» բառից առաջ լրացնել «մոնիթորինգի իրականացման ընթացքում ի հայտ եկած» բառերով,

15) Որոշման հավելվածի 24-րդ կետի 15-րդ ենթակետից հետո լրացնել նոր 15.1-ին ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«15.1) ծրագրի շրջանակում 0.5-10 հա կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար յուրաքանչյուր շահառուի կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի 75%-ը, որը 1 հա-ի հաշվով չպետք է գերազանցի ծրագրի 18-րդ կետում նշված ծախսի առավելագույն սահմանաչափի 75%-ը.»,

16) Որոշման հավելվածի 24-րդ կետի 16-րդ ենթակետը «ընթացքում» բառից հետո լրացնել «, իսկ կարկտապաշտպան ցանցի շահագործումը՝ հետներդրումային 6 տարիների ընթացքում» բառերով,

17) Որոշման հավելվածի 25.2-րդ կետում «Այգեհիմնման,» բառից հետո լրացնել «կարկտապաշտպան ցանցի,» բառերով,

18) Որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր Աղյուսակ 18-ով.

«**Աղյուսակ N 18**

Կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող բնակավայրերի ցանկ

Հ/Հ	Մարզ	Համայնք	Բնակավայր
1	Վայոց ձոր	Ջերմուկ	Գնդեվազ

2		Ջերմուկ
3	Վայք	Մարտիրոս
4		Նոր Ազնաբերդ
5		Փոռ
6		Ազատեկ
7		Հերհեր
8		ք. Վայք
9		Արին
10		Արտավան
11		Բարձրունի
12		Գոմք
13		Կարմրաշեն

14			Սարավան
15			Սերս
16			Ձառիթափ
17		Եղեգնաձոր	Մալիշկա
18	Լոռի	Փամբակ	Լեռնապատ
19			Վահագնաձոր
20			Քարաբերդ
21			Եղեգնուտ
22			Մարգահովիտ
23			Վահագնի
24			Փամբակ
25			Ձորագյուղ
26			Դեբետ

27		Բազում
28	Լոռի Բերդ	Լեջան
29		Սվերդլով
30		Լոռի Բերդ
31		Ուռուտ
32		Բովաձոր
33	Տաշիր	Բլագադարնոյե
34		Դաշտադեմ
35		Սարատովկա
36		Կաթնառատ
37		Մեդովկա
38		Նովոոսելցովո

39	Նորաշեն
40	Ձորամուտ
41	Միխայելովկա
42	Ձյունաշող
43	Մեծավան
44	Մեղվահովիտ
45	Կաթնաղբյուր
46	Տաշիր
47	Սարչապետ
48	Պրիվոլնոյե
49	Լեռնահովիտ
50	Պետրովկա
51	Պաղաղբյուր

52	Վանաձոր	Գուգարք
53		Շահումյան
54		Վանաձոր
55		Դարպաս
56	Թումանյան	Դսեղ
57		Մարց
58		Շամուտ
59		Աթան
60		Լորուտ
61		Ահնիձոր
62		Չկալով
63	Ստեփանավան	Ստեփանավան

64			Ուրասար
65		Լերմոնտովո	Անտառաշեն
66			Լերմոնտովո
67		Սպիտակ	Լուսաղբյուր
68			Խնկոյան
69		Ֆիոլետովո	Ֆիոլետովո
70	Արարատ	Արարատ	Զանգակատուն
71			Վարդաշատ
72			Ուրցալանջ
73			Լանջառ
74		Վեդի	Լանջանիստ
75			Լուսաշող
76			ՈՒրցաձոր

77		Արտաշատ	Նորաշեն
78	Գեղարքունիք	Գավառ	Գավառ
79			Նորատուս
80			Բերդկունք
81			Կարմիրգյուղ
82			Ծովազարդ
83			Գանձակ
84			Լճափ
85			Հայրավանք
86			Ծաղկաշեն
87			Սարուխան
88		Սևան	Սևան

89			Չկալովկա
90			Լճաշեն
91			Գեղամավան
92			Ծովագյուղ
93			Վարսեր
94		Մարտունի	Լիճք
95			Ծակքար
96			Ձորագյուղ
97			Ծովասար
98			Վարդաձոր
99			Երանոս
100	Կոտայք	Չարենցավան	Ալափարս
101			Ֆանտան

102	Ակունք	Կոտայք
103		Սևաբերդ
104		Զառ
105		Զովաշեն
106		Հատիս
107	Նոր Հաճըն	Քանաքեռավան
108	Հրազդան	Հրազդան
109		Լեռնանիստ
110		Սոլակ
111		Քաղսի
112	Ծաղկաձոր	Մեղրաձոր
113		Արտավազ

114		Գառնի	Հացավան
115		Աբովյան	Մայակովսկի
116			Գեղաշեն
117		Նաիրի	Զովունի
118			Բուժական
119	Արագածոտն	Թալին	Դավթաշեն
120			Դիան
121			Զովասար
122			Իրինդ
123			Վերին Բազմաբերդ
124			Կաթնաղբյուր
125			Կարմրաշեն
126			Ներքին Սասնաշեն

127		Վերին Սասնաշեն
128		Կաքավաձոր
129		Ներքին Բազմաբերդ
130		Շղարշիկ
131	Ապարան	Ափնագյուղ
132		Արայի
133		Արագած
134		Թթուջուր
135		Չքնաղ
136		Ձորագլուխ
137		Երնջատափ
138		Շենավան

139		Եղիպատրուշ
140		Կայք
141		Քուչակ
142		Ծաղկաշեն
143		Ջրամբար
144		Ապարան
145		Վարդենիս
146		Վարդենուտ
147		Լուսագյուղ
148		Հարթավան
149		Սարալանջ
150	Աշտարակ	Օրգով
151		Վերին Սասունիկ

152			Ավան
153			Ագարակ
154			Տեղեր
155			Լեռնարոտ
156		Մեծաձոր	Մեծաձոր
157			Օթևան
158		Ծաղկահովիտ	Հնաբերդ
159			Նորաշեն
160			Գեղադիր
161			Գեղաձոր
162	Շիրակ	Գյումրի	Գյումրի
163		Ախուրյան	Ազատան

164	Ախուրիկ
165	Ախուրյան
166	Այգաբաց
167	Առափի
168	Արևիկ
169	Բայանդուր
170	Բենիամին
171	Գետք
172	Երազգավորս
173	Լեռնուտ
174	Կարմրաքար
175	Կրաշեն
176	Հայկավան

177		Հացիկ
178		Ղարիբջանյան
179		Մայիսյան
180		Մարմաշեն
181		Մեծ Սարիար
182		Ոսկեհասկ
183		Ցաջուռ
184		Ցրառատ
185		Քեթի
186	Արթիկ	Անուշավան
187		Արթիկ
188		Լեռնակերտ

189	Լուսակերտ
190	Հայկասար
191	Հայրենյաց
192	Հառիճ
193	Հոռոմ
194	Հովտաշեն
195	Մեծ Մանթաշ
196	Մեղրաշեն
197	Նահապետավան
198	Նոր Կյանք
199	Պեմզաշեն
200	Սարալանջ
201	Սարատակ

202		Վարդաքար
203		Տուֆաշեն
204		Փանիկ
205		Փոքր Մանթաշ
205	Անի	Գուսանագյուղ
207		Ձորակապ
208		Մարալիկ
209		Շիրակավան
210	Ամասիա	Ալվար
211		Աղվորիկ
212		Ամասիա
213		Արդենիս

214	Արեգնադեմ
215	Բանդիվան
216	Բերդաշեն
217	Բյուրակն
218	Գառնառիճ
219	Գտաշեն
220	Զարիշատ
221	Զորակերտ
222	Ծաղկուտ
223	Հողմիկ
224	Հովտուն
225	Մեղրաշատ
226	Շաղիկ

227		Ողջի
228		Ջրաձոր
229	Աշոցք	Աշոցք
230		Բաշգյուղ
231		Բավրա
232		Գոգհովիտ
233		Ձույգաբյուր
234		Թավշուտ
235		Թորոսգյուղ
236		Կարմրավան
237		Կաքավասար
238		Կրասար

239			Հարթաշեն
240			Ձորաշեն
241			Ղազանչի
242			Մեծ Սեպասար
243			Մուսայելյան
244			Սարագյուղ
245			Սարապատ
246			Սիզավետ
247			Վարդաղբյուր
248			Ցողամարգ
249			Փոքր Սարիար
250			Փոքր Սեպասար
251	Տավուշ	Նոյեմբերյան	Բերդավան

252		Բարեկամավան
253		Բաղանիս
254		Դովեղ
255		Ջուջևան
256		Կողբ
257		Նոյեմբերյան
258	Իջևան	Դիտավան
259		Ծաղկավան
260		Ենոքավան
261	Դիլիջան	Թեղուտ
262		Հովք
263		Դիլիջան

264			Հաղարծին
265	Սյունիք	Սիսիան	Գորայք
266			Ծղուկ
267			Մուցք
268			Շաղատ
269			Նորավան

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ